

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
նախապատրաստական բաժնի գործունեության

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարանի) նախապատրաստական բաժնի գործունեության հիմնական նպատակը համապատասխան ուսումնական հաստատությունների ավարտական դասարանների աշակերտների և սովորողների՝ բուհ ընդունվելուն նախապատրաստումն է:
2. Աշակերտները կամ սովորողները նախապատրաստական բաժնի ունկնդիր ձևակերպվելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.
 - 1) անձնագիր (ծննդյան վկայական),
 - 2) 2 լուսանկար,
 - 3) ուսման սահմանված վճարի վճարման վերաբերյալ անդորրագիր:
3. Նախապատրաստական բաժնի ունկնդիրների համար կազմակերպվում են երկարաժամկետ (ութամսյա) և արագացված (երկամսյա) դասընթացներ:
4. Համապատասխան դիմումները ընդունվում են մինչև դասընթացները սկսվելը:
5. Ութամսյա նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա հոկտեմբեր-մայիս, իսկ արագացված դասընթացները՝ ապրիլ-մայիս ամիսների ընթացքում: Նախապատրաստական դասընթացների ուսման վարձը սահմանվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից:
6. Երկարաժամկետ նախապատրաստական դասընթացների ունկնդիրների գիտելիքների նախնական մակարդակին համապատասխան խմբեր ձևավորելու նպատակով բաժինը բոլոր առարկաներից նախապես անցկացնում է թեստավորում:
7. Նախապատրաստական դասընթացներում ուսուցումն իրականացվում է դասախոսությունների, գործնական աշխատանքների և խորհրդատվությունների ձևով:
8. Ուսումնական գործընթացում ունկնդիրների գիտելիքները վերահսկելու համար կիրառվում են հետևյալ ձևերը՝ ընթացիկ ստուգումներ ուսման ընթացքում և ավարտական քննություններ:
9. Ունկնդիրների գիտելիքների մակարդակը որոշվում է 20 միավորանոց համակարգով:
10. Համալսարանի և ունկնդիրների (ներկայացուցիչներ) հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:
11. Ունկնդիրների հետ կնքված պայմանագիրը Համալսարանի կողմից միակողմանի լուծվում է, եթե նրանք խախտել են Համալսարանի ներքին կարգապահական կանոնները: Նշված պայմանագիրը կարող է նաև լուծվել ունկնդրի նախաձեռնությամբ՝ Համալսարանի ռեկտորին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով: Պայմանագրով կարող են սահմանվել լուծման այլ հիմքեր:
12. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրներն իրավունք ունեն՝
 - 1) Ստանալ որակյալ կրթություն՝ համաձայն ուսուցման ընտրված ծրագրի,
 - 2) Օգտվել համալսարանի նյութատեխնիկական բազայի ընձեռած նարավորություններից,
 - 3) Ընթացքում փոխել նախապատրաստման ուղղվածությունը:
13. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրները պարտավոր են՝
 - 1) Սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,
 - 2) Սահմանված ժամկետներում կատարել բոլոր այն առաջադրանքները, որոնք նախատեսված են կրթական ծրագրերով,

- 3) Տիրապետել տեսական գիտելիքներին և գործնական հմտություններին՝ ընտրված հանրակրթական առարկաներից և դասընթացներից,
 - 4) Պահպանել համալսարանի կարգապահական կանոնները:
14. Նախապատրաստական դասընթացները վարում են համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչները: Նախատեսված լսարանային ժամերը հաշվառվում են ամբիոնային բեռնվածություններում:
 15. Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու նպատակով, ըստ հանրակրթական առարկաների, յուրաքանչյուր ուսումնական տարի ձևավորվում է փորձագիտական խորհուրդ, որը հրամանագրվում է համալսարանի ռեկտորի կողմից: Նշված փորձագիտական խորհրդի անդամների թեկնածուներին առաջադրում է ուսումնամեթոդական վարչությունը՝ նախապատրաստական բաժնի հետ համատեղ:
 16. Նախապատրաստական դասընթացի մասնակիցները պարտավոր են պահպանել Համալսարանի ներքին կարգապահական կանոնները, Բաժնի գործունեությունը կանոնակարգող ակտերը, ինչպես նաև Համալսարանի հետ կնքված պայմանագրերի պահանջները:
 17. Նախապատրաստական դասընթացներն ավարտած դիմորդները հեռակա ուսուցման համակարգ են ընդունվում ավարտական քննությունների գնահատականներով, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի մինչև 20 տոկոսի չափով:

